ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 99

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 07-029-0258-0022 կադաստրային ծածկագրով 0.06 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (խաղող) հողեր | 07-029-0258-0022 կադաստրային ծածկագրով 0.06 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցված շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4. Նաիրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զովունի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝* | | |
| | | Դ. Գրիգորյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ. Դավթյան |

Երևան, «28» «փետրվարի» 2024 թ.